



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Է. — ՇՐՋԱՆ Ժ.

ՏԱՐԻ Ժ. — ՅՈՒԼԻՍ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԵՒ ԱԶԳԻ ՎԻՃԱԿ.

Մեծ իմաստութիւն եւ անհրաժեշտ է նախ գիտնալ մեր՝ Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի ներկայ վիճակը, եւ ապա ըստ այնմ խորհել եւ հոգալ արժանաւոր դարմանները:

Եթէ արուեստագէտ եւ հմուտ բրժշկին ներելի չէ մի հիւանդ անհատի անգամ տկարութիւնը կանխաւ եւ խորին ուշադրութեամբ չքննած եւ չբահասկացած՝ անմիջապէս խելքին փչած ավիդդիկը հրահանգ եւ դեղը տալ, նոյնպէս պարտիզականին՝ իւր պարտիզի պիտոյից՝ անկոց եւ բուսոց եւլն բնութեան եւ պահանջմանց հակառակ խրնամք եւ դարման տանել, ապա ուրեմն քանի՜ առաւել ներելի չպիտի լինի ամեն անձանց՝ որք մի որոշ գաղափար՝ ըստոյգ տեղեկութիւն՝ գործնական փորձ

ունենալէ եւ կառավարչական կարողութենէ եւ խելքէ դուրկ լինելով՝ Հայոց Ազգի եւ Եկեղեցւոյ վիճակին տեղեակ՝ կարեկից եւ դարմանատու կամին լինել:

Ո՛վ կուզէ՝ թող լինի, միշտ կարող է բանագէտ ձեւանալ, եւ լոկ բերանով շատ բանի փորձառութիւնք կեղծել, մեծ մեծ տեսութիւններ բրթել, այս եւ այն անձանց՝ պարագայից եւ անցից համար կարեկցութիւն ցուցանել եւ վերջապէս դարմաններ առաջարկել: Բայց ներհուն եւ արդարեւ փորձառու անձանց գործ է այնպիսեաց տգիտութիւնը՝ հակասութիւնք եւ ասիկարութիւնք անմիջապէս հատկանալ եւ զգուշանալ, մինչ միամիտ եւ հասարակ անձինք ոչինչ իմանալով կամ իմանալ չկարողանալով՝ գուցէ ճարտարագրիչ եւ ճարտարախօս լեզուագարութիւններէն կյափշտակուին եւ կիսաբուին: Եւ ահա այս մեծ պակասութիւնն է՝ որ այժմ մեր մէջ բնդհանրանալոյ երես

696

բռնած է եւ բաւական վնաս կը տայ՝ եթէ չտեսնմ մինչեւ անգամ մի կերպ ծանր վտանգ կսպառնայ:

Յիրաւի Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի բազմակարօտ ներկայ վիճակը եւ բազմատեսակ հանգամանքը ճշտիւ ամփոփել եւ նկարագրելը շատ դժուարին է, ինչպէս նաեւ անհրաժեշտ եղած յոգնատեսակ եւ բազմաթիւ պէտքերը եւ դարմանները սակաւ միջոցի մէջ եւ գիւրութեամբ հոգալը անկարելի է, սակայն կենսական եւ անմիջական կարօտութիւնքը եւ պէտքերը հոգալը ինչպէս անշուշտ կարեւոր է, նոյնպէս բազում դժուարութեանց յաղթելով փորձառութեամբ դարձանն տնօրինելը վսեմ եւ նուիրական պարտաւորութիւն է մեր Ազգի եւ Եկեղեցւոյ Գլխոյն եւ Առաջնորդաց խորհրդակցութեամբ եւ աջակցութեամբ բանազէտ եւ ձեռնհաս ազգայնոց:

Կտեսնեմք ի ներկայիս՝ զի համեմատաբար՝ խօսողները՝ զանազան տեսութիւններ՝ դիտողութիւններ շռայլողները եւ բազմախուռն առաջարկութիւնք եւ դարմանք այս եւ այն կարօտութեանց համար՝ խիստ շատ՝ եւ աւելի ճիշտը՝ չափազանց են, իսկ գործողքը եւ արդեամբք անձնանուէր ջանացողքը խիստ քիչ են, եւ ուր խօսողը շատ եւ գործողք քիչ կլինի՝ բնականաբար սակաւ գործ եւ իրական բարի արդիւնք կտեսնուին:

Նկատեցէք գէթ վերջին մի քանի տարիներում մեր մէջ հրատարակեալ ամսագիր, լրագիր եւ բանասիրական գրքոյկները, եւ ահա մի ահագին եւ

անելանելի լաբէ-լինլոս՝ եւ աշտարակաշինութեան խառնախօսներու բազմաթիւ խմբեակներ կգտնէք:

Այսքան հրատարակութեանց գրեթէ շատին համար խալառ յայն Բարբառոյ յանապառէ էին եւ եղան ասելով՝ ոչ կրմեղանչեմք եւ ոչ կըսխալու իմք, սակայն պէտք չէ այսքանով զանցառութեան տամք բոլորը եւ անցնիմք. այո՛, պէտք է հետազօտեմք մանաւանդ մի քանի գրութեամբքները եւ հեղինակները գիտնալոյ եւ զգուշանալոյ համար՝ թէ ինչ տեսակ զոռելի սկզբունք՝ գաղափար՝ օտարանիւթ նպատակ եւ դաւադրութիւնք՝ ինչպէս նաեւ սարսափելի հրէշ անձինք կան մեր մէջ՝ որք այլ եւ այլ գիմակներով եւ խաբուսիկ յոյս եւ օգային խոստումներով Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի գոյութիւնը եւ ապագայն հիմն ի վեր տապալելոյ գործիքներ եղած են:

Գիտեցէք՝ ի՞նչ են եւ ուստի՞ կթելագրուին Հայոց Ազգի միութեան մէջ հղէլական՝ հրօնական՝ քեռական եւ այլն երեւակայական վնասակար սկզբունք տեսնելով՝ խտրութիւններ ձգելը, դարաւոր ժամանակներէ հետէ եւ դարաւոր վրտանգներու գիմակալելով զԱզգ մեր եւ զԵկեղեցի պաշտպանող՝ փրկող եւ կառավարող Եկեղեցական Վարչութեան գէմ՝ զինուելով եւ զայն տապալել երազելով՝ ուրիշ . . . վարչութիւն հիմնել ջանալը, աչքին առջեւը կատարուած իրական սոսկալի բարբարոսութիւնքը եւ հարստահարութիւնքը կարծես չտեսնելով՝ նոցա վերայ լուռ մընալը, եւ անդին . . . մի թեթեւ

շիւղը գերան կարծելով եւ դիտմամբ ձեւացնելով՝ Ազգի ընդհանուր շահուց դէմ՝ դաւաճանելը, ազգային գործոց եւ ընթացից վատ գոյն՝ եւ փոխարէնը կարծես Ձինական ուղղութիւն եւ գործերը ջատագովել եւ պաշտպանելը՝ յաւետ օտարին գործիք լինելով միմիայն անձնամոլ շահագիտութեամբ։ Դիմակաւորաց ընթացք եւ արգիւնքէն այսքան համառօտ քաղուածքը եւ հաւաստիքը բաւական թող լինի^(*)։

Արդ կերկրորդեմք՝ զի Հայոց եկեղեցւոյ եւ Ազգի ներկայ վիճակը պէտք է նախ քաջ ճանաչեմք եւ կշռեմք, եւ ըստ այնմ՝ ապա դարմանեմք։

Մեր՝ Հայոց եկեղեցւոյ եւ Ազգի ներկայ վիճակի անհրաժեշտ կարօտութիւնըն է՝ կենդանութիւն, լոյս եւ յաւաքարէնութիւն. կենդանութիւն՝ բարոյական եւ նիւթական, կենդանութիւն եւ պայծառութիւն՝ համանդամայն Ազգի եւ եկեղեցւոյ. լոյս մտաւորական եւ բարոյական, եւ յառաջադիմութիւն երկրագործութեան՝ արուեստից՝ վաճառականութեան՝ եւ աշխարհափարութեան մէջ։ Երբ սոքօքիղարգանամք՝ այնուհետեւ արգարեւ մեզ ոչ ինչ չպակասիր։

(*) Ուրիշ բարեպատեհ յօգուածում կտեսնուիմք նաեւ այն այլանդակ դիմակաւորի հետ՝ որ մինչև անգամ հասարակ շարականաց և թիւի երգոց՝ միանգամայն եկեղեցական պարզ արարողութեանց ևս դէմ միջակ կերպով տեղեկութիւն եւ հմտութիւններնենալով՝ եկեղեցական ձայնագրեալ շարականաց՝ երգեցողութեանց և արարողութեանց դէմ խճրճանք կկեղուագարէ։

Եթէ դիմակաւորաց ամեն մի ատելի եւ զղուելի շարժում՝ ամեն մի կեղծաւորութիւնք եւ խաբեբայութիւնք՝ ամեն մի զրպարտութիւնք եւ խարդաւանութիւնք նկարագրել կամենամք, պէտք է ամեն գործ եւ զբաղմունք ի մի կողմ ծալլել՝ եւ երկար ժամանակ հետեւել, որպէս զի ըստ արժանւոյն նկարագրուի. սակայն բանագէտ անձինք քիչէն եւս կարող են շատ բան իմանալ եւ իւր անձը եւ զայս զգուշացնել, եւ այս նպատակաւ է որ՝ մեք միշտ համառօտ տեսութեամբ կանցնիմք եւ այն դուռ ուրեք մի քանի ծանրակշիռ վատթարագոյն սկզբանց եւ ուղղութեանց դէմ։

Խելամուտ եղէք եւ կարեկցեցէք՝ պարոն դիմակաւորներ, ուշադրութեամբ դիտեցէք եւ զգացէք Հայոց եկեղեցւոյ եւ Ազգի վիճակը՝ անհրաժեշտ կարօտութիւնքը եւ դարմանները, եւ ըստ այնմ՝ եթէ կարող էք՝ անկեղծ ու աննենգ ոգւով եւ սիրով միացէք եւ գործեցէք ողջամիտ եւ բանագէտ Հայոց հետ, ապա թէ ոչ՝ աւելի մեծ բարութիւն եւ շնորհ հիշամարուի՝ եթէ լռութիւնը սիրէք եւ խանգարիչ միջամտութիւններէ զգուշանաք կամ իսպառ հեռանաք, որպէս զի միայն ձեզապիսեաց քաջածանօթ եղած անձրեւէն ապահովուիլ երեւակայած ժամանակներդ՝ կարկուտի դառն եւ մահաբեր հարուածոյն ենթարկուելոյ առաջնորդ չդառնաք։